ՈՐՈՇՈՒՄ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական

համալսարանի գիտական խորհրդի 2011թվ. նոյեմբերի 7-ի նիստի /արձանագրություն թիվ 3/

Լսելով և քննարկելով ՀՊՄՀ ուսանողական խորհրդի գործունեության մասին ՈւԽ նախագահ Վ. Գասպարյանի հաշվետվությունը՝ գիտական խորհուրդը

որոշում է ի գիտություն ընդունել ՈւԽ նախագահի ներկայացրած հաշվետվությունը.

1.Գիտական խորհուրդը արձանագրում է՝

1. Ուսանողական խորհուրդը նպաստում է համալսարանում ինքնակառավարման և ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալմանն ու զարգացմանը, ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների իրավունքների և պարտականությունների կատարմանը:

2. Մասնակցում է ուսումնակրթական գործընթացների, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսանողական գիտական գործունեության կազմակերպմանը:

3. Նպաստում է ուսանողության ստեղծագործական, ինտելեկտուալ, մշակութային ու հոգևոր զարգացմանը, ուսանողության առօրյայի, հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը (ուխտագնացություններ, արշավներ, ամառային դպրոցներ, ուսանողական ճամբարներ):

4. Հաստատում է կապեր ու գործնական փոխհարաբերություններ ՀՀ և արտերկրի ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների հետ: Հրավիրում տարբեր ոլոտների գիտնականների, իրականացնում ուսանողների փոխանակություն:

5. Իրականացնում է սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր, կամավորական աշխատանքներ սոցիալական տարբեր հաստատություններում:

6. Մշակում և իրականացնում է սոցիալապես անապահով ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը նպաստող ծրագրեր:

7. Խորհուրդը մշակում և համալսարանի ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսանողական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնչվող հարցեր, տարբեր որոշումների նախագծեր և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:

8. Վերոնշյալ ծրագրերն ու միջոցառումները նպատակաուղղված են ուսանողների ներգրավվածությունը ընդլայնելուն:

2.Գիտական խորհուրդն առաջարկում է.

1. Ստեղծել ուղեցույց, որտեղ ներառված կլինեն ուսանողների իրավունքները և պարտականությունները:

2. Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների թափուր աշխատատեղերի համար կազմակերպված մրցույթին դիտորդի կարգավիճակով մասնակից դարձնել ՈՒԽ ներկայացուցչին:

3. Ուսանողական խորհրդում ստեղծել ուսանողների ինֆորմացիոն բանկ:

4. Նախապատրաստական աշխատանքներ իրականացնել համալսարանի շրջանավարտների միություն ստեղծելու նպատակով:

ՌԵԿՏՈՐ Ռուբեն Միրզախանյան